

ուածական տեղեկութիւններ, որոնք մեծ մասով պիտի հաստատեն վերի ենթադրութիւնը: Ասոնց վրայ աւելցնենք նաեւ Հանուէյի որոշ վիպութիւնները եւ կը գտնենք, որ ԺԸ դարուն Հայ ընդարձակ աշխարհատարած վաճառականութիւնը ունէր կենսական բան մը, իրարահասկցողութիւն, սերտ միութիւն, որ, սակայն, բոլորովին կը պակսի արդի հայ վաճառականութեան մէջ, ոչ միայն ընդհանուր առմամբ, այլ նոյնիսկ հատուածական կերպով, որպէս ըլլալու է դոնէ գործի վաճառականութեան մէջ:

III

Հայ վաճառականները, հակառակ որ ըզգոյշ էին եւ շատ լաւ պատճառներ ունէին զգուշանալու այս երկրես Անգլիացիէն՝ Մր. էլզօնէն, այսուհանդերձ կարելոր տեղեկութիւններ տուած էին անոր՝ ըսելով թէ Ծահին որդին տեսակ մը մենաշնորհ ըրած է իրեն՝ ներարժուած սպրանքները բնութեամբ գնել կամ իր վաճառականներուն գնել տալ: Նոյնպէս նաեւ հում մետաքսը ծախելու իրաւունքը իւրացուցած է: Այնպէս որ, Ռէչտ տարուած սպրանքը պէտք էր կամ Ծահին որդւոյն կամ իր վաճառականներուն ծախել իրենց սակով, եւ կամ թէ հոն պահել: Ապրանքը չէր կարելի Ռէչտէն գուրս հանել, կամ Ծահին որդւոյն մարդոցմէն գատ ուրիշի ծախել:

Մր. էլզօն, առանց վախնալու, ժամանակ մը խորհելէ վերջ կ'որոշէ Պարսկաստան երթալ: Ան կը գրէ. «Նկատելով որ Հայերը իրենց սպրանքը բնոցան Ռէչտի համար, ատրկա քաջալերեց մեզ նոյն վտանգը աչք առնել, քանի որ առանց վտանգի ոչինչ կարելի է ընել»¹⁾:

Այսպէս վստահելով Հայոց տարիներու փորձառութեան եւ կապկելով անոնց ընթացքը՝ այս Անգլիացին գործի ձեռք գարկաւ:

1740-ին Մր. էլզօն Յուլիս թուակիր յուշադիր մը կը գրէր Mr. E. Finch-ի, որ Ս.

Պետերբուրգի Անգլիական ներկայացուցիչն էր: Ի միջի այլոց ան կը տեղեկացնէր.

«Հիւսիսային Պարսկական գաւառները կ'արտադրեն մեծազոյն քանակութեամբ լաւագոյն հում մետաքս, որ ասկէ կը հայթայթուի հարաւային նահանգներուն, եւ Մէչէզի մետաքսի արհեստանոցներուն, նաեւ Թուրքիոյ արհեստանոցներուն: Մեծաքսով ամենաառաջ գաւառներն են՝ Կիլանը, որուն գլխաւոր քաղաքն է Ռէչտը, Շիրվանը, որուն մայրաքաղաքն է Շամախի, Արանը, որ ընդհանրապէս Երեւան կը գրուի եւ որուն մեծ քաղաքն է Գանձա (Գանձակ՝ Յ. Ք.): Այս գաւառներուն երկու առաջինները կասպից ծովուն հարաւաբեւտեան եզրերէն կը վրայ են, իսկ վերջին երկուքը անոնց կից»:⁽²⁾

Մր. էլզօն կը յաջողի Ռուսիոյ Բրիտանական ընկերութեան եւ Պարսից դահաժառանգ Ռիդա Ղուլի Միրզայի հետ համաձայնութիւն կնքել, նոյնիսկ վերջինէս Մէչէզ գրուած հրովարտակ մըն ալ ստանալ, որուն համաձայն Անգլիացի վաճառականներուն ամէն տեսակ բացառութիւններ եւ թոյլտուութիւններ կ'պահանջուէին:

էլզօն կը շարունակէր իր կեդրոնին տեղեկացնել.

«Բրդեայ սպրանքները, զոր Հայերը կը ներմուծեն Գիլան թուրքիոյ ճանապարհով եւ կամ Ռուսական կայսրութեան մէջով, բոլորն ալ Հոլանտական կերպասներ են: Սակայն, ասկէ շատ քիչ մաս Մէչէզ կը գրկուի: Ռորով՝ Լոնտոնէն կասպից ծովի վրայով այս քաղաքին հետ առեւտուրը քանի մը տարուայ ընթացքին նշանաւոր պիտի ըլլայ մեր (Անգլիական) բրդեայ արտադրութեանց սպառման աւրնչութեամբ»:⁽³⁾

Այս յոյսով տարուած է ան, երբ Պարսից Ծահին որդւոյն հետ ծանօթ համաձայնութիւնը կը կնքէ: Ան կը ցանկայ, որ Անգլիացի վաճառականներ ներկայացուցիչներ հաստա-

1) British Trade Over Caspian Sea.— J. Hanway, London, 1754. Vol. I, էջ 13:

2) Անդ՝ էջ 23:

3) Անդ՝ էջ 24: